

գասիւրը... Դո՛ւք էք իմ մուսանս—էջ 7. հանելուկ. հիվ կամ
թնչն է Մարգարի մուսանս:

2. Ժ. ՄԱՍՍՈՆ. Նապաստակ Խէչանի վրէժնորդութիւնը կամ ինքն քեզ
օգնիր. զրոյց պատկերազարդ, Ֆրանս. փոխադրեց Լևոն Մելիք-Աղամանց. Թիֆ-
լիզ 1905. էջ 57.

Ճիշտն ասեմ՝ վաղուց է այսպիսի հայաշունչ լեզուով
գրուած մանկական գիրք չէր ընկել ձեռքս. թէև գրքի վրայ
փոխադրութիւն է տպուած, բայց իսկապէս ինքնուրոյն աշ-
խատութեան տպաւորութիւն է թողնում: Գրքի իւրաքանչիւր
էջից բուն հայ լեզուի բուրմունքն է ստացւում. գեղեցիկ ոճեր,
ժողովրդական բառեր, կոկ, պարզ դե իւրըմբռնելի նախադա-
սութիւններ. այսպիսի յատկութիւնները գնահատելի են գրքերի
և մանաւանդ մանկական ընթերցանութեան գրքերի համար:
Այս մանկական զրոյցի բարոյականն է ինքնօգնութեան գա-
ղափարը, որ շատ յարմար ընթերցանութեան նիւթ է մանա-
ւանդ մեր ժամանակներում. միշտ ուրիշների յուսով ապրողը
վերջը բոլոր ունեցածն էլ կկորցնի: Գրքի արտաքինն էլ հա-
մապատասխանում է ներքին արժանաւորութեանը. տպուած
է մաքուր, խոշոր տառերով և ընտիր թղթի վրայ. յաջող են
նաև պատկերները:

3. ՅԱՐ. ՆՄԱՅԵԱՆ. Միենոյն՝ գողացում... պատկեր. Թիֆլիս 1905 թ. էջ 16.

Վերջին տասնամեակի ընթացքում հայ ժողովրդի կրած
սոսկալի տառապանքները, հայի ընակավայրը արեան հեղեղներով
ծածկող գազանային արարքները, մի այնպիսի դրութիւն ստեղծե-
ցին, որի առաջ նսեմացան մեր պատմագիրների և ձեռագիրների
յիշատակարաններում նկարագրուած արիւնալի ու հոգեմաշ
գժբաղտութիւնները, հայութեան սև ճակատագրի միշտ և շա-
բունակ կրկնուող պատահարները: Ժողովրդական սարսափի
մը տեսակը մնաց, որ չկրեց բազմաչարչար հայութիւնը. կո-
տորած, աւերում սով, հրդեհ, երկրաշարժ, երաշտ, մորեխ,
խօլերա, բռնութիւն, բանտ, աքսոր... էլ մը մէկն ասեմ: Եթէ
այս դառնութեան ու լեռնացած վշտի շրջաններում մենք տա-
ղանդաւոր գրողներ ունենայինք, կարող էին իրենց անունն
անմահացնել՝ իրական կեանքի արիւնաներկ դրամաները շա-
բահիւսելով. բարթուղիմեան պատմական գիշերները մեր ներ-
կայի լուկ ուրուագծերը կարող են լինել... Տարաբախտաբար